ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2024թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ՀՐԱՉԻ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար քանդակագործ, ակադեմիկոս, ՀՀ ժողովրդական նկարիչ Լևոն Հրաչի Թոքմաջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՎՈՆ ՀՐԱՉԻ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Թոքմաջյանը ծնվել է 1937 թվականի հունիսի 16-ին, Երևանում:

1952-1957 թվականներին սովորել է Երևանի Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, 1957-1963 թվականներին՝ Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: 1963-1975 թվականներին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Երգել է Հայաստանի պետական երգչախմբում: Մեծ հաջողությամբ զուգորդելով քանդակը՝ Լևոն Թոքմաջյանը հասել է արվեստի մեծ բարձունքների:

1969 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է, Եվրասիական գեղարվեստի ակադեմիայի անդամ (1998, Բիշքեկ), 2008 թվականից՝ Ճարտարապետության և շինարարարության Հայաստանի ազգային համալսարանի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի դասախոս, պրոֆեսոր:

Եվրասիական միջկոնտինենտալ, միջազգային գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ է, ակադեմիկոս:

2010 թվականին Արգենտինայում մասնակցել է համաշխարհային բիենալեի, 2008, 2009 և 2010 թվականներին Պենզայում՝ Քանդակի միջազգային սիմպոզիումի:

2010 թվականին արժանացել է Էջմիածին քաղաքի պատվավոր քաղաքացու կոչմանը՝ Էջմիածնում կատարած գործերի և վաստակի համար, և «Թեքեյան» ամենամյա մրցանակի: Արժանացել է նաև ՀՀ ժողովրդական նկարչի կոչմանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով քանդակագործ, ՀՀ ժողովրդական նկարիչ Լևոն Թոքմաջյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում՝ առաջարկվում է Լևոն Հրաչի Թոքմաջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**